




ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 10.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՀԱՅՏԵՐՈՐ 31
1875.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

Կ Ր Թ Ա Ր Ա Ն

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ

Դ Ա Ս Զ.

Ա Ր Տ Ա Ս ՈՒ Ք ԵՒ Ե Ր Դ

« ՈՒՄ նմանեցուցից զազգս զայս . նման է մանկուայ՝ որ նստիցին ի հրապարակս . կտրդայցեն զընկերս իւրեանց . և ասիցեն . Փողս հարար ձեզ՝ և ոչ կարաւիցիք . սղբացար ձեզ՝ և ոչ կոծեցարաք . Եկն Յովհաննէս . ոչ ուտէր և ոչ լոմեցէր . և ասեն . Դեւ քո ի նմա . Եկն Որդի մարգարէութեան և լոմեցէ . և ասեն . Ահա՛ այր կերող և արբեցող . բարեկամ մարտաւորաց և մեղաւորաց . և արդարացաւ ինձս . տուեմիւն յորդանոց իւրոց » : Մատ. ԺԱ. 16—19 :

ԱՒԱՆԱՆՔ . Թուինք մտօք այն նշանաւոր դարն . յորում Յովհաննէս Մկրտչի պաշտօնն կ'աւարտի և Յիսուս

սի Քրիստոսի պաշտօնն կը սկսի : Կանգ առնուենք այն երեքուն սահմանին վերայ . ուր նախնիքաց Կարապետի վերջին ճառագայթներն տակաւ առ տա՛կաւ կը խորասուզին եւ կ'անհետին Արդարութեան Արեգական (Յիսուսի) նորանշաղկէ գեղափայլ արշալուոյ մէջ . Երուսաղէմ երկու մարգարէներ ունի իւր առջեւ . յորոց հինն կը խոնարհի . կը մեղմանայ նորեկին առջեւ . և սա՛կայն նորեկն . բազմութեան հետ խառ-

նուէլով, կը խնդրէ մկրտիլ իւր Նախ-
ընթացէն այն մկրտութեամբ, որով
կը մկրտէ նա ապաշխարութեամբ առ-
ինքն գիմուններն: Բայց ի զուր այն եր-
կու մարգարէքն փոխադարձ կը վկա-
յեն իրարու համար, ժողովուրդն բան
չը հասկնար այն համաձայն վկայու-
թենէն: Ընդհակառակն՝ ժողովուրդն
այնպէս կը կարծէ, որ այն երկու մար-
գարէքն բոլորովին իրարու ներհակ են,
թէ՛ վարդապետութեամբ և թէ՛ բա-
րոյականութեամբ, մին խտուութեամբ՝
մինչև բրտութեան հասած է, և միւսն
ներողութեամբ՝ մինչև յետին ծայր
թուլութեան: Վասն զի, մին ոչ կուտէ
և ոչ կ'ըմպէ, և միւսն կ'ուտէ և կ'ըմ-
պէ մինչև անգամ մաքսաւորաց և մե-
ղաւորաց հետ: Եւ որովհետեւ ժողո-
վրդեան կարծիքով այն երկու մարգա-
րէքն եւս կը չափադանցին իրենց բըւ-
նած ընթացքին մէջ, և երկրքեան եւս,
թէ և տարբեր եղանակաւ, կը հեռա-
նան ուղիղ բանէ և ճշմարտութենէ,
ուստի ժողովուրդն երկուսն եւս կը
մերժէ, չընդունիր, ակնուենելով ան-
շուշտ մի աւելի լուսաւոր և իմաստուն
վարդապետի, որ գայ և քարոզէ միջին
ուղիղ ճանապարհաւ, առանց երկու
ծայրայեղութեանց գիմելու: Այսպէս
ուրեմն, ոչ խտասկեցութիւնն եւ ոչ
ներող գիծութիւնն ընդունելութեան
չեն արժանանար ժողովրդեան կողմէն:
Թէ՛ Յովհաննէս Մկրտիչն և թէ՛ Յիսուս
Քրիստոս երկրքեան եւս կը մնան այն
բազմութեան մէջ, նման այն մանուկ-
ներուն, որք հրապարակի մէջ նստած
կը կոչեն իրենց ընկերներն և կ'ասեն.
«Փոշ հարաք ձեզ՝ և ոչ կաքաւեցիք.
սղբացաք ձեզ՝ և ոչ կոծեցարուք»:

Ժողովրդեան համար անհնարին էր,
որ կարենար ընտրութիւն տանել եւ
այն երկու մարգարէներէն մին ըն-
դունէր. հետեւագէս, կամ երկուսն

եւս պիտի ընդունէր և կամ երկուսն
եւս պիտի մերժէր: Վասն զի Յիսուս
Քրիստոս կը ճանաչէր եւ կը հռչակէր
Յովհաննէս Մկրտիչի պաշտօնն և յայտ-
նապէս մկրտեցաւ նորա ձեռք: Յով-
հաննէս Մկրտիչն եւս, իւր կողմէն,
մեծ յարգանք, մեծ ակնածութեամբ
կը խօսէր Յիսուսի Քրիստոսի վերայ:
Եթէ Յովհաննէս Մկրտիչն մարգարէ է,
Ուրեմն Յիսուս ևս մարգարէ է. քանզի
Յովհաննէս ինքն կը քարոզէ: Եթէ Յի-
սուս մարգարէ է, ուրեմն Յովհաննէս
եւս մարգարէ է. վասն զի Յիսուս ոչ
միայն մարգարէ, այլ և մեծ մարգարէ
կ'անուանէ զՅովհաննէս: Թէ՛ մին եւ
թէ՛ միւսն չեն կամիր ընդունուիլ միայ-
նակ: Երկրքեան եւս կը քարոզեն, որ
անհնար է միայն պաշտօնին հաւատալ՝
առանց միւսոյն պաշտօնին հաւատա-
լու: Երկրքեան ևս զիրար կ'երաշխա-
ւորեն: Երկրքեան միասին պիտի մտա-
նեն և միասին պիտի ելնեն: Այլ հետե-
ւագէս ժողովուրդն եւս պարտաւոր-
ուած է կամ երկուսն ևս ընդունիլ և
կամ երկուսն եւս մերժել:

Արտեսներք ահա, եղբարք, որ Յի-
սուս Քրիստոս և Յովհաննէս Մկրտիչ
հաստատապէս կը վկայեն իրարու հա-
մար. բայց մի թէ՛ այն փոփոխակի վը-
կայութենէն ժողովուրդն չը պիտի ըս-
տիպուի խորհիլ և կասկածիլ նոցա վկա-
յութեան վերայ: Երբ երկու քարոզաց
վարդապետութիւնն իրարու հակա-
ռակ կ'երեւի, իսկ ընդհակառակն քա-
րոզիչներն միմեանց համար վկայութիւն
կը տան, միմեանց ջատագով կը հան-
դիտանան, իրարմէ տպացոյց կ'առնուն.
Երբ այն երեւոյթն կը տեսնուի, բնա-
կանաբար կը հետեւի, որ կասկածներն
իրական և հիմնաւոր չեն, և ոչ թէ հա-
կասութիւն, այլ անշուշտ համաձայնու-
թիւն կայ երկու քարոզաց վարդապե-
տութեան մէջ, և եթէ որոնուի, իս-

կոյն կրտսնուիս յն համաձայնութիւնըն Վատն զիջեթ իրական լինէր նոցա վարդապետութեան մէջ երեւցած հաւատութիւնն, ոչ ապաքէն քարոզիչքն աւելի շուտով կարող էին նշմարել միմեանց հակասութիւնն քան թէ այլք։ Ոչ ապաքէն հակասութեան վնասն քարոզիչներուն աւելի կը վերաբերէր և ամենէն առաջ նոքա պիտի աճապարէին միմեանց հակասութիւնն հերքել, որպէս զի իւրաքանչիւրն իւր կողմէն կարող լինի կուսակցութիւն շահիլ ու իւր վարդապետութիւնն յառաջ տանել։ Ոչ ապաքէն, եթէ բացարձակ խակ չը նշաւակէին միմեանց հակասութիւնն, անշուշտ ուրիշ եղանակաւ կը զգայնէին ժողովուրդէն, որ միմեանց հակառակ կը վարդապետեն և միայն վարդապետութիւնն՝ հերքումն է միւսոյն։ Սակայն կը տեսնենք ահա, որ ոչ միայն չեն մերժեր իրարու վարդապետութիւն, այլ կը վկայեն իրարու համար, թէ և իրենց վարդապետութիւնն, իրենց վարմունքն, ըստ երեւութիւն, մին դատապարտութիւն կ'երեւի միւսոյն։ Բաց ինչո՞ւ զանազան ենթադրութեանց կը դիմէ ժողովուրդն. ինչո՞ւ կը չփութի, ինչո՞ւ կը տագնապի, քանի որ կը տեսնէ թէ երկու քարոզիչներն իրարու համար կը վկայեն, պէտք է որ ինքն եւս այսպէս քննութեան առնու գործնայն է՝ սոյն երկու քարոզիչքն, որք իրարու հակառակ կ'երեւին, խկապէս իրարու հակառակ չեն և անպատճառ մի հիմնական համաձայնութիւն կայ սոցա մէջ։

Եթէ ժողովուրդն այս կէտէն նաշէր, և այս եղանակաւ քննէր, շուտով կը պարզուէր խնդիրն։ Ժողովուրդն պիտի քննէր հիմնապէս՝ թէ կայ արդեօք իրական հակասութիւն երկու մարդարեւից վարդապետութեան մէջ։ Ի՞նչ բանի մէջէ արդեօք հակասու-

թիւնն։ Տարբեր պարտաւորութիւններ կը քարոզեն արդեօք։ Տարբեր իմաստներ և զգացումներ կը յայտնեն արդեօք։ Տարբեր Աստուած կը քարոզեն արդեօք։ — Ոչ երբէք։ Տարբեր կերպիւ կը նային արդեօք ժողովուրդէն վերայ, մին կը նախապատուէ արդեօք հասարակութեան մի դասն և միւսն նորա ներհամի կը գործէ։ — Ոչ երբէք։ Ովոր կը դիմէ երկու մարդարեւներուն, սիրով եւ բարով կ'ընդունին։ Երկու քեան եւս նոյն սէրն կը տածեն առ ժողովուրդն, երկոքեան եւս կը սիրեն բնկեալ սրտէրն։ Երկոքեան եւս ժողովուրդի բարութեան կը վառաբանին։ Ի՞նչ է ուրեմն որ կը բաժնէ երկուսն իրարմէ, ի՞նչ է որ անհամաձայն և անմիաբան կ'երեւցնէ։ — Մին եկած է, ոչ կ'ուտէ, ոչ կը խմէ, այսինքն սաստիկ խտրակեցութեամբ կ'ապրի, խակ միւսն եկած է, կ'ուտէ և կը խմէ, այսինքն միւս մարդ կանց պէս կ'ապրի։ Բայց որովհետեւ ոչ մին և ոչ միւսն իրենց կեցութեան եղանակն իբրեւ օրինակ և օրէնք չեն աւանդեր այլոց, որովհետեւ կեցութեան երկու եղանակներն եւս, ըստ տեղւոյն և ըստ ժամանակին, կարող են գործ դրուիլ, և մին բնաւ դատապարտութիւն չէ միւսոյն, ուստի մարդ կարող չէ բնաւ այս պարագայէն օգուտ քաղել և յայտարարել, որ սոյն երկու մարդարեւքն իրարու հակառակ կը խօսին։

Բայց անշուշտ դիտողութիւն պիտի անէք, եղբարք, որ ես ամեն բան չասայի, և արդարեւ՝ չասայի։ Մարդոց Որդին գալով՝ ոչ միայն կ'ուտէր և կը խմէր, այլ կ'ուտէր և կը խմէր մաքսաւորաց և մեղաւորաց հետ, և աստի կը հետեւցնեն չրէպոյք, որ Որդին մարդոց բարեկամ է մաքսաւորաց և մեղաւորաց։ Եւ ոչ միայն այսչափ, այլ թերեւս կ'ուղէին ասել, որ Որդին

մարդոյ ոչ միայն բարեկամ է մաքսաւորաց և մեղաւորաց, այլ հետեւող է նոցա օրինակին, մասնակից նոցա կեանքին և ընթացքին: Լաւ նկատեցէք, եղբարք, միթէ զորմանալու է, որ մարդոյ Որդին Բարեկամ է մեղաւորաց. միթէ աւելի ուրախանալու չէ այս մասին: Ոչ ապաքէն Յովհաննէս Մկրտիչն եւս կ'ընդունէր մեղաւորներն, միայն այսու տարբերութեամբ, որ նա անապատին մէջ կրտսասէր մեղաւորաց. իսկ Յիսուս Քրիստոս կը շրջէր, կ'որոնէր, կը խնդրէր մեղաւորներն: Բարեկամ մեղաւորաց, և այս բարեկամութիւնն յանցանք կը համարէք Յիսուսին: Լաւ կը մտածէք արդեօք այս բանիս վերայ: Դուք յանցանք կը համարէք Յիսուսին, որ ուրիշներէն, նաեւ նոյն իսկ Յովհաննէս Մկրտչէն աւելի լաւ կը յաղթէ այն զղուանքին, զոր բնականաբար կը զգայ սուրբն և արդարն, երբ կը հանդիպի մեղաւոր հասարակութեան, երբ կը պատահի յանցաւոր մարդոյ, երբ կը տեսնէ մօլի մարդ: Յանցանք կը համարէք, որ Յիսուս Քրիստոս կը գթայ այնպիսի անձանց վերայ, որոց վերայ բացի իրմէն ոչ ոք պիտի չը գթար երբեք: Յանցանք կը համարէք, որ այս մեղաւոր մարդիկն համակրութիւն կը դնեն առ աստուածային քարոզիչն արդարութեան, և երկար ժամանակ ուրոնելէն զինի՝ այժմ կը տեսնեն իրենց մէջ, կը ծանաչեն, կը սիրեն և կը փափաքին նորա խօսքերն լսել, որք լի են շնորհօք եւ ճշմարտութեամբ: Յանցանք կը համարէք, աւանդ, որ թագաւորն սրբութեան, թագաւորն սրբոց, անհուն խանարհութեամբ, սեղան նստած է մեղաւորաց հետ, որպէս զի այս պատեհ առթիւ գրաւէ նոցա սիրտն ու հոգին: Ինչո՞ւ արդեօք դուք եւս ձեր սեղանն չէք հրաւիրէր

զՅիսուս: Նա ձեր սեղանն եւս կը գոյ: Նա կ'երթայ, ուր որ զինքն կոչեն. և եթէ մի օր Փարիսեցին եւս հրաւիրէ իւր մօտ ծաշելու, պիտի սիրով երթայ այս ամենաբարի Փրկիչն և թերեւս այս սեղանին վերայ եւս պիտի հնչեցնէ իւր ամենէն սրտաշարժ և ամենէն վըսեմագոյն քարոզն: Բայց դուք կ'ասէք. միթէ հացկերոյթն քարոզութեան տեղ է. միթէ ռետելով և խմելով վարդապետութիւն կը լինի: Ի՞նչ պատրաստութիւն, ի՞նչ տեղ, ի՞նչ լսարան է այս, ուր բարեպաշտութիւն կը քարոզուի: Միթէ այն է տեղին և եղանակն քարոզից և վարդապետութեան: Գիտեմ, գիտեմ, որ ըստ ձեզ, պէտք է հեռացնել այս սեղանն, պէտք է վերջընել այս կերակուրներն, գինիներն, ծաղիկներն եւ թերեւս այս կանաչեղէններն իսկ, և շուտով պատրաստել քարոզութեան ամբիսն մարգարէին համար: Միթէ Յիսուս շատ անգամ, առանց յառաջաբանի և առանց հանդիսի, խօսեցած չէ՞ երկնային բաներու վերայ, կամ մի ձիթենեաց հովանւոյն տակ, կամ մի ձորակի տիանց վերայ, կամ մի մեծ ճանապարհի փողոց մէջ: Ի՞նչ է ուրեմն ձեր խնդրածն, ով դուք մարմնաւոր և կեղծ հոգեւոր մարդիկ: Ի՞նչ է այս ժողովն և հացկերոյթն, Յիսուսի Քրիստոսի համար, եթէ ոչ պաւտեհ առիթ, սրով կարող է խօսքեր խօսիլ հոգեաց խաղաղութեան համար: Միթէ յանցաւոր են այն խնձոյքներն ու հացկերոյթներն. — Բայց դուք մինչեւ ցայսօր այնպէս կարծած չէք և երբեք խնձոյքներն դատապարտած չէք: Ի՞նչ կարող է արգիլուլ ուրեմն, որ Յիսուս Քրիստոս եւս բազմի ի սեղան խնչոյց:

Եթէ հացկերոյթներն յանցաւոր են, դուք ինչո՞ւ յաճախ հացկերոյթներ կը կազմէք: Արդե՞ք են ուրեմն այն

սեղաններն, այն կոչունքներն, ուր կարելի չէ շահաւէտ խօսք խօսիլ և, ուր, բոտ ձեր կարծեաց, մի բարեպաշտ մարդ կարող չէ նստիլ: Բայց թողունք սոյն հարցմունքներն և նայինք, այս բարեշուք կոչնականի գործքերուն և խօսքերուն: Յովհաննէս Մկրտիչն, զոր դուք ընդգիծակաց կը համարէք Յիսուսին, Յովհաննէս Մկրտիչն իւր անապատին մէջ միթէ պիտի աւելի շատ խօսէր, աւելի օգտաւէտ խօսէր: Լաւ նայեցէք, լաւ 'ի միտ առէք, նա որ այժմ սեղան կը նստի մեղաւորաց հետ, մի թէ բնաւ նորան պիտի չընմանի, որ անապատին մէջ ուրիշ կերակուր չունէր, բայց միայն մարտիս և մեղք վայրերն: Վասն զի ոչ ապարէն մի և նոյն վարդապետութիւնն, մի և նոյն խօսքն է 'ի բերանս երկոցունց: Բան մի կայ միայն, որ գիտողութեան արժանի է. տեղիս առած է Նախընթացի ճակատէն այն տխուր խտտակեցութիւնն, որով երբեմն մթապնած էր, և թագաւորած է նորա տեղ երկնային իմն խաղաղութիւն և ուրախութիւն: Բայց ասացէք համարձակ, ի՞նչ կը խօսի նա, որ արժանի չէ այն երկիրին, զոր կը բանայ ձեզ, և այն Աստուծոյն, զոր կը քարոզէ ձեզ:

Ախ, թողէք ինձ, որ ես ասեմ ձեզ: Երբ կը համարձակիք դուք յանգիմանել եւ կշտամբել այս կամաւոր աղքատն, որ գլուխ գնելու տեղ չունի և իւր օրերն արեգակի քերմութեան տակ կ'անցնէ և իւր գիշերներն առանց ծածկութիւն և ապաստանի. երբ կը կըշտամբէք զնա, որ միանգամ մեծատան հացկերոյթն ընդունեց, ինչպէս որ ընդունեց անապատի մէջ աղքատի հացի կտորն, այս կշտամբութեամբ դուք ձեր միայն չէք յայտնէր եւ գայթակղութեան խնդիր մի կը յաւելէք, որ բողբոջին անտեղի է: Ձեր ցաւն ոչ այս է և

ոչ այն, այլ թէ ինչո՞ւ Յիսուս մեծատան հրաւերն ընդունած և նորա հետ սեղան նստած է: Բայց ոչ ապարէն այս կոչունքին մէջ եւս կը խօսի չափաւորութեան, ժուժկալութեան, արդարութեան և վերջին դատաստանի վերայ, ինչպէս որ կը խօսէր ծախկներու ախանց վերայ և լերանց գաղաթանց վերայ: Նա կը հրաւիրէ զձեզ 'ի սրբութիւն, նա կը զարթուցանէ ձեր յիշողութեան յաւիտենական օրէնքներն, զոր առ ոտն կոխեցիք. նա կը նկարագրէ ձեր վիճակն և ահա այս է, զոր կարող չէք տանիլ և կեղծաւորաբար դայթակղեալ կը ձեւանաք և իբր թէ չէք ուզեր ամենեւին անսուրբ տեղւոյ մէջ (կոչունքի մէջ) սրբութեան դասեր և խրատներ լսել: Ահ, աւելի լաւ պիտի լինի արդեօք լսել գաւթի մէջ, տաճարի մէջ, այն արիւնտու բեմի բարձրութենէն, այն խաչի արիւնտական բազմոյցէն, ուստի մի վերջին անգամ եւս պէտք է ուսուցանէ և օրհնէ զմարդիկ:

Կը տեսնենք ահա, որ եթէ սոյն պիտի մի գիւրին քննութեամբ համադրած լինէին, թէ մի և նոյն հոգին է 'ի Յովհաննէս Մկրտիչ և 'ի Յիսուս Քրիստոս, մի և նոյն վարդապետութիւնն է և բարոյականն. եթէ քննած և համոզուած լինէին, որ ոչ Յովհաննէս սրբութիւնն առանց կարեկցութեան և գթութեան է և ոչ Յիսուսի Քրիստոսի կարեկցութիւնն առանց սրբութեան, այնուհետեւ հարկ չ'էր լինիր ամենեւին երկրորդ քննութեան դիմել համոզուելու համար, որ մի միայն Մեսիայի և իւր նախընթաց Կարապետի վարդապետութիւնն է արժանի ընդունելութեան: Երբ վարդապետութեան միութիւնն հաստատուէր, անհնարին էր որ պարզութիւնն, սրբութիւնն և գեղեցկութիւնն եւս ընդ նը

մին չը հաստատուէին : Ակներն պիտի տեսնուէր այնուհետեւ, որ երկու մարդարէքն եւս կը հրաւիրեն զմարդ ճանաչել զինքն և ՚ի միտ առնուլ իւր վախճանն ու կատարածն : Երկոքեան ևս կը ջանան զարթուցանել մարդոյ խղճին մէջ զղջում և սորջանք : Երկոքեան ևս մարդն Աստուծոյ ներկայութեան բերելով կը պարտաւորեն ծուռեղ չորել այս թշնամանեալ աստուածութեան առջեւ : Երկոքեան եւս կը քարոզեն ամենամաքուր առաքինութիւն և կը խնդրեն տպաւորել մարդոյ հոգւոյ մէջ արժանաւոր իղձեր և միտումներ : Երբ այս ամենն տեսնուէր, ճանաչուէր և խոստովանուէր, գայթակղութիւնն իսկոյն կը դողդէր : Բայց կարծեմ թէ այսու եւս գոհ պիտի չը լինէին, այլ պիտի ցանկային իմանալ թէ քանի որ Յովհաննէս և Քրիստոս հոգւով և վարդապետութեամբ համաձայն են իրարու հետ, ինչո՞ւ համար կենցաղովարութեան մէջ իրարմէ կը տարբերին : Ինչո՞ւ համար առաջնայն իմաստութիւնըն տեսակ մի տխրութիւն և վայրագութիւն ունի : Ինչո՞ւ համար երկրորդին իմաստութիւնն յայտնի կերպիւրնկերական է և համակրական : Թերեւս սոյն երկու մարդարէից արբութիւնն և բարոյականի մաքրութիւնն ու վսեմութիւնն իմանալէն զինի, սոյն կենցաղավարական տարբեր պարագաներն եւս կամին իմանալ : Ինչպէս որ շատ բանաւոր չ'էր սոյն տարբերութեանց առթիւ ուրանալ Յովհաննէս և Յիսուսի մէջ եղած կական նմանութիւնն, նոյն պէս բանաւոր է և բնական սոյն նմանութիւնն ճանաչելէն և հաստատելէն զինի խոյղ և խնդիր լինիլ տարբերութիւնն իմանալու : Ինչո՞ւ, վարդապետութեամբ, արբութեամբ և բարոյականաւ մի են Յովհաննէս և Յիսուս Քրիստոս, իսկ կեցութեամբ տարբեր :

Ահա՛ երկրորդ առիթ մտաւանջութեան Հրէից և իրենց նմանեաց :

Հրէից մէջէն նոքա, որոնք առաջին քայլն արած էին, այսինքն երկու մարդարէից վարդապետութեան միութիւնըն ու բարոյականի արբութիւնն ճանաչած էին, իսկոյն երկրորդ քայլն եւս արին, այսինքն թէ ինչո՞ւ համար կեցութեամբ կը տարբերին Յովհաննէս և Յիսուս : Նոքա ասացին ինքնին, որ հոգւով միացած սոյն երկու սուրբ անձանց մէջ տեսնուած տարբերութիւնըն պատահական չէ, այլ բանաւոր և նաև նախատեսուած : Նոքա ասացին, որ անշուշտ սոյն տարբերութիւնն նըշանակութիւն ունի և է անտարակոյս ՚ի շինութիւն և ՚ի կրթութիւն մարդկութեան : Մեր Փրկիչն ո՛չ թէ վատ նշան կը համարէր, այլ ընդհակառակն կամէր, որ սոյն տարբերութիւնն նկատուի և տեսնուի : Եւ երբ սոյն տարբերութեան համար խնդիր կը յուզուէր, մեր Տէրն չարհամարհեց պատասխանել : Յովհաննիսի աշակերտքն եկին և ասացին Յիսուսին. « Ընդէ՞ր մեր և Փարիսեցիքն պահեմք յաճախ և քո աշակերտքն ո՛չ պահեն » : Յիսուս պատասխանեց. « Միթէ՞ մաքթ ինչիցէ մանկանց առաքաստի սուգ առնուլ մինչ վեոյայն ընդ նոսա իցէ » : Մատ. Թ. 14-15 :

Երկու բան կը նշմարուի Յովհաննէս աշակերտաց հարցման մէջ. առաջինն է զարմացումն Յիսուսի աշակերտաց վերայ, որ բնաւ չեն պահեր. վստան զի պահեցողութիւնն էր, որ իրենց աւելի բնական և օրինաւոր կ'երեւէր. և ընդհակառակն ոչ պահեցողութիւնն իրենց զարմանքն կը շարժէր : Իսկ երկրորդն է այն, որ միայն իրենք չեն պահողն, այլ Փարիսեցիք եւս կը պահեն ՚ի հնուց անտի : Եւ այս պատճառաւ Փարիսեցւոյ օրինակն յառաջ

կը բերեն , որովհետեւ նոցա պահեցու
ղութիւնն եւս բնական կ'երեւի ինչ
պէս իրենցն : Ուրեմն պահքն է այս
տեղ կանոնաւորն և ստորաւորն : Իսկ
ընդհակառակն՝ ոչ պահեցողութիւնն
է բացառութիւն և նորութիւն : Մեր
Տիրոջ պատասխանն գրեթէ մի բառի
մէջ է , բայց այս բառն է մի ճառա-
գայթ լուսոյ . « Փեսայի բարեկամներն
կարող չեն պահել , քանի որ Փեսայն ի-
րենց հետ է » . և ո՞վ է այս Փեսայն .
— ինքն Յիսուս Քրիստոս :

Այսպէս ուրեմն , ամենքն , որոնք
Յիսուսէն առաջ էին և նորա հաղորդ
դասցութենէն հեռի , կը պահէին .
Յիսուս Քրիստոս պարզապէս չը յայտ-
նէր այս կէտն , բայց նորա տուած պա-
տասխանէն լիովն կը հասկացուի :
Վասն զի ոչ — պահեցողութիւնն իւր
հետ եղածներուն համար արտօնու-
թիւն կը համարի : Սակայն զանազա-
նելուէ Փարիսեցւոց և Յովհաննու ա-
շակերտաց մէջ եղած տարբերութիւ-
նն , զոր իրենք չեն ուզեր զանազա-
նել : Փարիսեցւոց պահքն ձեւ մի էր ,
յորմէ գաղափարն հեռացած էր , կամ
աւելի լուս է տեսել , մինչդեռ ՚ի սկզբն
պահոց գաղափարն էր՝ գաղափարորո-
մութեան ապաշխարող սրտի , այժմ
փոխած էին Փարիսեցիք ուրիշ գաղա-
փարի , այն է կամաւոր զընդունութեան
և ձեռք բերած արժանաւորութեան :
Միով բանիւ , ՚ի սկզբն պահքն ա-
պաշխարութեան նշան էր , այժմ Փա-
րիսեցիք դարձուցած էին իբրեւ պար-
ճանաց նշան : Իսկ ընդհակառակն Յով-
հաննէս Մկրտչի պահքն հիմնուած էր
նախկին ճշմարիտ գաղափարի վերայ :
Թէ՛ նորա պահքն և թէ՛ մկրտութիւնն
պատկեր էին ապաշխարութեան : Յով-
հաննէս այն պատճառաւ կը պահէր և
պահք կը քարոզէր , որպէս զի կարու-
ղանար զգալի կերպիւ մարմնացնել և

պատկերացնել այն մեծ և անփափոխ
սկզբունքն՝ թէ գլխումն , այն է լաւն և
ստորջնալն վասն մեղաց՝ է առաջին
պայման յիշութեան և միակ ճանա-
պարհ կենաց :

Բայց անշուշտ պիտի ասէք դուք
ինձ , եղբարք . ո՞չ ապաքէն Յովհաննէս
Մկրտչի՞ Փեսայի , այսինքն Յիսուսի
Քրիստոսի , բարեկամներէն մին էր :
Ո՞չ ապաքէն սրտով Փեսայի ընտանու-
թեան մէջ կը բնակէր : Ի՞նչպէս կա-
րող էր նա արտմիլ , և սգոյ ու արտա-
սուսաց առաջնորդ լինիլ տրտմեալ հո-
գիներուն : Ո՞չ ապաքէն զՅիսուս Քր-
իստոս տեսած ժամանակ յայտարարեց
նա , որ իւր ուրախութիւնն լցեալ է :

Տարակիշ չը կայ , եղբարք , որ Յով-
հաննէս Մկրտչի Փեսայի բարեկամնե-
րէն և փեսաւորներէն մին էր և հետե-
ւապէս իւր ուրախութիւնն կատա-
րեալ էր : Բայց սոյն Յովհաննէս Մր-
կրտչին , որ յինքն կ'ամփոփէր բովան-
դակ Հին Աստուծոյն , բոլոր հին
մարգարէքն , որոց շղթայն իւր մէջ
կ'եղերէր , պաշտօն ստացած էր ա-
պօշխարութիւն քարոզելու : Նա իւր
քարոզութեան սուր եւ պատասխող
խափառն կը բանար այն ակօսներն , զու-
րքս յետ ստիպու ժամանակի պիտի մը-
շակէին , պիտի պաղարբերէին երկնային
արեգական կենդանորար ճառագայթ-
ներն : Նա սրտերն կը պատրաստէր
զՅիսուս Քրիստոս ընդունելու համար ,
և ինչո՞վ կամ ի՞նչպէս կը պատրաստէր .
— ապաշխարութեամբ : Տիտէր էր նա
րա պաշտօնն և տիտէր այն տրտմու-
թեամբ , « Որով սիրուն յուրախութիւն
կը փոխի » . Է՞լէս : Տիտէր էր իրա-
պէս և պարզապէս : Թէ՛ եւ մարգարէ ,
բայց իբրեւ մարգ և մեղաւոր՝ կը կրէր
իւր սրտին մէջ այն ներքին տրտմու-
թիւնն , զոր կը կրէ մեղաւորն , երբ
կամաց կամաց կը զգայ իւր խփական

միջոցն, կը ճանաչէ իւր մեղաւորութիւնն, կը ճանաչէ իւր ներսրութեան կարօտ դրութիւնն, կը ճանաչէ, որ զրկուած է Աստուծոյ առջեւ յամենայն փառաց և ՚ի պատուոյ : Յովհաննէս Մկրտիչ, առանց ինքնին ապաշխարելու՝ ապաշխարութիւն չէր քարոզեր : Նա ներկայացուցիչ էր մարգկային խրդձի, ինչպէս Յիսուս Քրիստոս ներկայացուցիչ պիտի լինէր աստուածային արգարութեան : Յովհաննէս կը տեսներ ամենամեծ և խորհրդաւոր ժամանակակէտն հասած : կը տեսներ իւր թշուառ ազգի վիճակն, զոր իւր մէջ կը կրէր բովանդակ : կը տեսներ տապարն առ արմին ծառոյ : կը տեսներ աստուածային ցոտումն, որ պիտի զեղանէր ողորմութեամբ և գթութեամբ հանգերձ, կը տեսներ այս ամենն եւ կ'աւանդուէր ամեն եզրանակ գործ դրնել, և թէ՛ բանիւ և թէ՛ գործով զեկուցանել իւր ազգին :

Յովհաննէս էր կենդանի ուսն, կենդանի մուրճ, զրկուած սրտերն բեկանելու համար՝ ուստի և իւր կեանքն իւր պաշտօնի խառութեանն կը համակերպէր : Հազարաւոր խառութիւններ գործ կը գնէր իւր անձին դէմ, տաժանելի խառակեցութեան մէջ զինքն կը կրթէր : բայց այս ամենն ասկումին անկատար նշան էին այն խառութեան, որով կը արտփ ճշմարտապէս ապաշխարող սիրտն : Յովհաննէս Մկրտչի բնական անապատն մի դաս է և միանգամայն մի սրտակեր : Դաս է նոցա համար, որոնք տակաւին չը գիտեն թէ ինչպէս աշխարհիս գրգռոյններն, աշխարհիս յազումներն գիւրութեամբ կը ծածկեն կը լսեցնեն խրճի և Աստուծոյ ձայնն : Պատկեր է այն անապատն այն մեղքէ յազթահարեալ հոգւոյն, որոյ մխիթարութիւններն յանկարծ կ'ըսպարտին, և իւր շուրջն ուրիշ

բան չը տեսներ, բայց միայն իւր մեղքին — տխուր անապատ : Յովհաննէս օգոյ խառութեան կը մատնէ իւր անձն, խոշոր ուտելիքներով կը սնանի, իբրեւ պատկեր այն ապաշխարող մեղաւորին, որ զինքն խաղառ անարժան կը համարէ աստուածային շնորհաց և մինչեւ անգամ այն բարիքներուն, զոր հաւատարապէս կը բաշխէ ամեն արարածոց : Յովհաննէս Կորապետի ընթացքն թէ՛ բանաւորէ և թէ՛ գերբնական : Նորա վարքն, նորա ընթացքն յաւիտեան պիտի նշան և օրինակ լինէր ապաշխարութեան : Արդ՝ ամեն ապաշխարող հոգի բնական է այն անապատին մէջ, կերակրուած է սոյն վայրենի կերակրով, և այս նուազ և ողբալի մերկութեամբ ներկայացած է աստուածային արգարութեան բարկացոյց նայուածքին :

Բայց ահա՛ ասիկ Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի : ահա՛ ասիկ Փետոյն մարդկութեան ՚ի սուգ արամութեան : Ահա՛ ասիկ Հրեշտակն Ուխտի : ահա՛ ասիկ Միջնորդն : Եթէ ամենայն ինչ ՚ի Յովհաննէս Մկրտչի պիտի համապատասխանէր իւր ներկայացուցած գաղափարին, ոչ ապաքէն ամենայն ինչ ՚ի Յիսուս Քրիստոս պիտի յայտնէ մեզ թէ ինչ է Յիսուս Քրիստոս : Այն, եղբարք իմ, առանց խօսին սպասելու եւս՝ տկներեւ կը յայտնէ մեզ Յիսուս թէ ինչ է ինքն : Վասն զի նորա բոլոր պաշտօնն արդէն մի երկար չարաբանք է, նորա բովանդակ կեանքն մի չարաչար մահ է : Ո՛չ թէ միայն մարդ պիտի լինի նա, որ նորա համար արդէն կը նշանակէ մեռնիլ : բայց որովհետեւ մեք մեղաւոր գորով պիտի չը հասկնայինք՝ թէ ոչ թագաւորական ծերանի, ոչ մեծութիւն, ոչ գանձ պիտի չը կարողանային յարգարեւ այն հրաշալի իջումն, ուստի այն

ուշայնութեան մէջ նա պիտի որոնէ մի տեղի յայտնի ուշայնութիւն, նա, մարդկութեան համար իւր անձն ուշայնացնելով՝ պիտի յառաջէ, պիտի իջանէ ի մահ, նա պիտի լինի ազքատ, պիտի լինի անշուք և անարգ, նա տեղ պիտի չունենայ իւր գլուխն հանգչեցնելու համար: Նա ամեն բանի պիտի զիջանի, պիտի պահանջէն եւ նա բնաւ պիտի չընդգիմանայ: Ազքատ ներու, բորսաներու և անարգ մարդկանց ընկերութեան մէջ նա պիտի կրէ, ի պատահել հարկին, քաղց, ծարաւ, ցուրտ, տոթ, զրկանք և նախապնդ: Բայց մի պահանջէք Յիսուսէն, ինչ որ կարող չէ ներկայացնել. մի պահանջէք զգնումն և ապաշխարութիւն, որ օտարօտի է նորա սուրբ սրտին, սուրբ անձին համար: Յովհաննէս Մկրտիչն աւանդատն ինեզրեց՝ անապատին համար, քաղցն՝ քաղցին համար, զրկումն՝ զրկման համար, չբաւորութիւնն՝ չբաւորութեան համար: Բայց այսպէս չէ մեր Տիրոջ կրածն: Նա պիտի կրէ, պիտի չարչարի առաւել քան զՅովհաննէս, բայց ոչ թէ իւր անձն օգնութեան համար, այլ այն բարեաց համար, զոր կամի անել կամ արած է մարդկութեան համար: Սաղայն, բաւորութիւնն, որ նորա միակ օրէնքն է, մարդասիրութիւնն, որ նորա սկզբունքն է, պէտք է զինքն վարեն ամեն տեղ: Նա պիտի լինի մերթ մեծամեծաց սրա-

լաաներու մէջ, եթէ մեծամեծք զինքն կոչեն. մերթ և աւելի յաճախ պիտի լինի ազքատաց մօտ, եթէ ազքատ ներն զինքն խնդրեն: Միով բանիւ, նա կը գթայ ինչպէս մեծամեծներուն, նոյն պէս և ազքաւներուն: Ասոն զի կը տեսնէ նա, որ մեծատուններն խակ, որք երջանիկ կ'երեւին, իրենց մահէն զինի, իրենց ունեցածէն կողոպտուելէն զինի, դարձեալ իրենց բաժին թշուառութիւնն պիտի ունենան: Ուրեմն մի պահանջէք, որ չը մոնէ մեծատանց ընկերութեան մէջ. թողէք որ նորա ներկայութիւնն սրբազարծէ նոցա առ ներն ու հացկերոյթներն. նորա աստուածային խօսքերն ուղղեն, սրբազարեն նոցա ուրախութեանց և զուարճութեանց յիմարութիւնն: Ինչպէս Աստուած, նոյնպէս և Մարդասիրութիւնն ամենուրեք է: Արեգական ծառագայթն ազտեղութեան վերայ ընկնելով՝ չը սղծուիր. Յիսուս Քրիստոս մեղաւորաց ընկերութեան մէջ մոնելով՝ չը կորսնցնէր իւր սրբութիւնն: Եթէ նորա պաշտելի սրբութիւնն ու անարատութիւնն արատաւորուելու լինէր, այն վայրկենէն պիտի արատաւորուէր, երբ մարդկանց մէջ բնակեցաւ, մարդկանց հետ խառնուեցաւ, Աստուածութենէն մարդկանց կարգն իջաւ:

(Շարունակելի)